ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԻ ԴԱՎԹՅԱՆ



ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՎԻՍՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԻ ԴԱՎԹՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՎԻՍՈՒՄ

Ուսումնամեթոդական ուղեցույց

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 658.114(07)
ԳՄԴ 65.29ց7
Դ 234

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ
աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ռ. Ավագյան

Գրախոսներ՝ ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Հ. Գրիգորյան,
ԵՊՀ սերվիսի ամբիոնի վարիչ, աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Ռ. Սուվարյան

Դավթյան Տ. Պ.
Դ 234 Ձեռնարկատիրությունը սերվիսում: Ուսումնամեթոդական ուղեցույց/Տ. Պ. Դավթյան: Եր., ԵՊՀ հրատ., 2019, 60 էջ:

Ուսումնամեթոդական ուղեցույցում ներկայացված են «Ձեռնարկատիրությունը սերվիսում» դասընթացի բովանդակությունն ու կառուցվածքը, դասընթացի շրջանակներում կիրառվող մեթոդաբանությունն ու գործնական պարապմունքների կազմակերպման մոտեցումները՝ առաջադրանքների համապատասխան օրինակներով:

Ուսումնամեթոդական ուղեցույցը կարող է օգտակար լինել «Ձեռնարկատիրությունը սերվիսում» դասընթացի դասավանդմամբ զբաղվող դասախոսների համար՝ դասընթացի ծրագրի կազմման և գործնական պարապմունքների կազմակերպման նպատակով, ինչպես նաև՝ դասընթացն ուսումնասիրող ուսանողների համար:

ՀՏԴ 658.114(07)
ԳՄԴ 65.29ց7

ISBN 987-5-8084-2420-3

© ԵՊՀ հրատ., 2019
© Դավթյան Տ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....**5**

1. Դասընթացի նպատակը, խնդիրները և ակնկալվող կրթական վերջնարդյունքները 7
2. Դասընթացի մեթոդաբանությունը և կիրառվող մեթոդները..... 10
3. Դասընթացի թեմատիկ բովանդակությունն ու կառուցվածքը 15
4. Գործնական պարապմունքների կազմակերպման օրինակներ և ցուցումներ 23

4.1. Ձեռնարկատիրական գործունեության էությունը.... 23

4.2. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպումը սերվիսում 29

4.3. Սերվիսային ձեռնարկության ծախսերի հաշվառումը..... 33

4.4. Փոքր եվ միջին ձեռնարկատիրության ոլորտը..... 43

4.5. Ձեռնարկատիրության պետական կարգավորման սկզբունքները և մեթոդները 49

Եզրակացություն *55*

Գրականություն..... *57*

Հավելված..... *58*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կյանքի զարգացման ներկայիս փուլում տեղի են ունենում տնտեսության կառուցվածքային վերափոխումներ: Ինչպես համաշխարհային տնտեսության մեջ, այնպես էլ առանձին երկրների համախառն ներքին արդյունքի մեջ գնալով աճում է ծառայությունների կամ սերվիսի ոլորտի մասնաբաժինը (Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ ծառայությունների տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում 2018 թվականին կազմել է մոտ 65%):

Ընդ որում՝ ՀՆԱ-ի մեջ սերվիսի ոլորտի մասնաբաժնի ավելացումն ունի երկակի դրական ազդեցություն:

Առաջին հերթին՝ սերվիսի զարգացման շնորհիվ ավելի լավ պայմաններ են ստեղծվում՝ հասարակական կյանքի կայուն զարգացման համար:

Երկրորդ՝ սերվիսի զարգացումը նոր պայմաններ է ստեղծում՝ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման արդյունավետության բարձրացման համար:

Սերվիսի ոլորտի զարգացման համար կայուն հիմքեր կարող է ստեղծել ոլորտի ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Սերվիսի ոլորտի ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման խնդրի լուծումն անհրաժեշտ է քննարկել տնտեսագիտության մեթոդաբանության, մեթոդների, մոտեցումների համատեքստում:

Ըստ էության՝ խնդրի լուծումը գնում է ընդհանուրից դեպի մասնավորը: Այսինքն՝ որպես սերվիսի ոլորտի զարգացման հիմք դիտարկվում է այս ոլորտում ձեռնարկատիրական գործունեության որակական բարելավումը:

Դասընթացի նպատակն է սերվիսի ոլորտում ձեռներեցությամբ զբաղվելու համար համապատասխան գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումը։

Մեթոդական ձեռնարկը նվիրված է սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության ծավալման վերաբերյալ նյութերի ուսուցանման և գործնական պարապմունքների կազմակերպման մեթոդաբանության մշակմանը։

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիալ-մշակութային սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության իրականացման առանձնահատկություններին և դրա արդյունավետ կազմակերպման սկզբունքներին:

Դասընթացի խնդիրներներն են.

- ծանոթանալ ձեռնարկատիրության գործունեության էությանը,
- ծանոթանալ բիզնես մտահաղացումների ձևավորման և այն նյութականացնելու գործընթացին,
- քննարկել ձեռնարկատիրական հաջողության հասնելու համար անհրաժեշտ անձնային և գործնական հատկանիշները,
- բացահայտել ծառայությունների տնտեսական էությունը, ծառայությունների ոլորտի և ծառայությունների շուկայի առանձնահատկությունները,
- ուսումնասիրել սերվիսի ոլորտում ձեռնակատիրական գործունեության կազմակերպման առանձնահատկությունները,
- ձևավորել գիտելիքներ սերվիսի ոլորտի ձեռնարկության ծախսերի հաշվառման և տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ,
- պատկերացում ունենալ սերվիսի ոլորտի ձեռնարկության կառավարման մոտեցումների և մարքեթինգային քաղաքականության առանձնահատկությունների վերաբերյալ,
- ուսումնասիրել ձեռնարկատիրության ոլորտը կարգավորող իրավական դաշտը և ձեռնարկատիրության պետական կարգավորման մոտեցումները:

Դասընթացի շրջանակներում ձեռք բերված տեսական գիտելիքների հիման վրա ուսանողն ունակ կլինի.

1. ներկայացնելու ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման հիմունքները և դրանց առանձնահատկությունները սերվիսի ոլորտում,
2. լուսաբանելու սերվիսի ոլորտի կազմակերպության ստեղծման ընթացակարգերը, թվարկելու անհրաժեշտ փաստաթղթերը,
3. ներկայացնելու բիզնես մտածելակերպի առանձնահատկությունները՝ ձեռնարկատիրոջ անձնային և գործնական կարևորագույն հատկանիշները,
4. մեկնաբանելու ծառայությունների տնտեսական բնութագիրը,
5. հաշվարկելու ծառայության ինքնարժեքը և կառավարելու սերվիսային ձեռնարկության ծախսերը,
6. նկարագրելու ձեռնարկության կառավարչական հիմնական գործընթացները և արդյունավետ կառավարման մոտեցումները,
7. թվարկելու ձեռնարկության տնտեսական անվտանգության սպառնալիքները և ձեռնարկատիրության ռիսկերը,
8. սահմանել սերվիսի ոլորտի կազմակերպությունների կողմից իրականացվող մարքեթինգային քաղաքականության առանձնահատկությունները,
9. ներկայացնելու ձեռնարկատիրական հարաբերությունը կարգավորող իրավական դաշտը,
10. քննարկելու պետական տնտեսական քաղաքականությունը, ձեռնարկատիրության պետական կարգավորման մեթոդները և սկզբունքները:

Գործնական մասնագիտական կարողությունների և հմտությունների առումով ուսանողն ունակ կլինի.

1. կանխատեսելու կազմակերպության շահույթը՝ արտադրության ծավալների և գների փոփոխության դեպքում,
2. հաշվարկելու տնտեսական գործունեության շահութաբերության շեմը և արտադրանքի թողարկման (ծառայությունների մատուցման) անվնասաբեր ծավալը,
3. կազմելու և ներկայացնելու գործարարության ծրագիր (բիզնես պլան), ինչպես ծառայությունների ոլորտի, այնպես էլ ցանկացած այլ կազմակերպության համար,
4. գործնականում իրականացնելու ձեռնարկության հիմնադրման և կառավարման գործառույթներ,
5. գնահատելու կազմակերպության տնտեսական անվտանգության սպառնալիքները և ձեռնարկատիրական գործունեության ռիսկերը,
6. իրականացնելու ռիսկերի կառավարման գործառույթներ,
7. կատարելու մարքեթինգային հետազոտություններ և գնահատելու շուկայական պահանջարկը:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մեթոդաբանության հիմքում դրված է մասնավորից դեպի ընդհանուրը և ընդհանուրից դեպի մասնավորը գնացող սկզբունքը:

Մասնավորից դեպի ընդհանուրը գնացող հայեցակարգում նախ ուսումնասիրվող օբյեկտը բաժանվում է առանձին բաղադրիչների, և տրվում է դրանցից յուրաքանչյուրի գնահատականը, ընդգծվում է դրանց տեղը և դերը ընդհանուր համակարգում:

Այնուհետև որոշակի սկզբունքների և հատկանիշների հիման վրա կատարվում է ուսումնասիրվող մասերի միավորում: Ընդ որում՝ միավորված բաղադրիչների ընդհանուր ներուժն ավելի մեծ է, քան դրանց առանձին բաղադրատարրերի թվաբանական գումարը:

Միավորված համակարգն օժտված է ներքին հզոր էներգիայով, որն առաջանում է առանձին մասերի շփման արդյունքում:

Ընդհանուրից դեպի մասնավորը գնալու մտածողությունը ենթադրում է համընդհանուր մոտեցումների ու սկզբունքների տարածումը մասնավորի վրա:

Ընդհանուրի (կոմպլեքսայինի) դաշտում պայմաններ են ստեղծվում՝ ձևավորելու առանձնացված մասերի հիերարխիկ սկզբունք, որն իր հերթին թույլ կտա ցույց տալ և գիտականորեն հիմնավորել յուրաքանչյուր բաղադրիչի դերը ընդհանուրում:

Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր ձեռնարկության տեղն ու դերը տնտեսության մեջ:

Այդ նպատակով դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են սերվիսի ոլորտում արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու սկզբունքները: Ուսումնասիր-

վում են բիզնես մտահղացման և դրան հաջորդող ձեռնարկության հիմնադրման հետ կապված ընթացակարգերը, ձեռնարկության արդյունավետ կառավարման (այդ թվում՝ մարդկային ռեսուրսների կառավարում, ռիսկերի կառավարում, ֆինանսների կառավարում, մարքեթինգ և այլն) և զարգացման ուղիները, սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման առանձնահատկությունները, ձեռնարկատիրության ոլորտի պետական կարգավորման մոտեցումները՝ պետական տնտեսական քաղաքականության և հարկային քաղաքականության միջոցով:

Այս ընթացքում դիտարկվում է առանձին վերցված կազմակերպության տնտեսական գործունեությունը և դրա արդյունավետության ապահովման խնդիրը: Սակայն յուրաքանչյուր կազմակերպություն, բացի ներքին միջավայրից (նպատակներ, կառուցվածք, խնդիրներ, տեխնոլոգիա, մարդկային ռեսուրսներ), ունի նաև արտաքին միջավայր (գործընկերներ, մրցակիցներ, սպառողներ, պետություն), որտեղ այն գործունեություն է ծավալում:

Կազմակերպության արտաքին միջավայրը և այնտեղ տեղի ունեցող գործընթացները մեծապես ազդում են կազմակերպության գործունեության վրա: Այդ իսկ պատճառով կազմակերպության գործունեության արդյունավետության ապահովման համար շատ կարևոր է ուսումնասիրել և գնահատել արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը դրա վրա:

Հենց այդ հանգամանքով է պայմանավորված դասընթացի շրջանակներում մարքեթինգային գործունեության կազմակերպման, արտաքին սպառնալիքների և ռիսկերի կառավարման, ձեռնարկատիրական գործունեության այլ սուբյեկտների հետ իրավական, պայմանագրային, գործարքային հարաբերությունների, պետության տնտեսական և հարկային քաղաքականության, հա-

կամոնոպոլային միջոցառումների վերաբերյալ համապատասխան թեմաների քննարկումը։

Բացի արտաքին միջավայրի ազդեցության գնահատումից՝ կարևոր է կազմակերպությունը դիտարկել որպես տնտեսական օրգանիզմի մի մաս, որի կողմից իրականացվող տնտեսական գործունեությունն էլ իր հերթին պայմանավորում է ճյուղային, ազգային, պետական և համաշխարհային տնտեսությունների զարգացման օրինաչափությունները։

Դասընթացի շրջանակներում կիրառվում են տնտեսագիտության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և այլ գիտություններ-ի կողմից օգտագործվող մեթոդները։

Դրանք են.

- Վերլուծության կամ անալիզի մեթոդ։ Այս մեթոդը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող օբյեկտը բաժանել մասերի և բացահայտել յուրաքանչյուր մասի հատկանիշները։ Այն հնարավորություն է տալիս գնահատել օբյեկտի կամ երևույթի յուրաքանչյուր մասը, կատարել օբյեկտի մասերի հիերարխիկ դասակարգում, որոշել յուրաքանչյուր մասի դերն ու նշանակությունը տվյալ օբյեկտի համար և որոշակի դարձնել յուրաքանչյուր մասի բովանդակությունը։[5]
- Համադրման կամ սինթեզի մեթոդ։ Այս մեթոդը հնարավորություն է տալիս օբյեկտի՝ արդեն իսկ բաժանված մասերի և դրանց հատկանիշների միավորմամբ պատկերացում ստանալ օբյեկտի ընդհանրական հատկանիշների և օբյեկտի մասին՝ ընդհանուր առմամբ։[5]
- Համեմատման մեթոդ։ Այս մեթոդը հնարավորություն է տալիս համեմատելու տարբեր երևույթները, օբյեկտները և դրանց առանձին մասերը՝ ըստ իրենց հատկանիշների։ Ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս բացահայտելու օբյեկտների և

դրանց առանձին մասերի նմանությունները, տարբերությունները, ուժեղ և թույլ կողմերը: [5]

- Վերացարկման մեթոդ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս օբյեկտի կամ երևույթի հատկանիշներն ուսումնասիրելիս անտեսել դրա ոչ էական, ոչ կարևոր հատկանիշները՝ կենտրոնանալով միայն էական կամ մեզ հետաքրքրող կողմերի վրա: Սա հնարավորություն է տալիս խնայելու ժամանակը և չշեղվելու հետազոտության հիմնական ուղղությունից:[5]
- Մտահանգման մեթոդ: Մտահանգումը բարդ մտածողական գործընթաց է, որի պրոցեսում մարդը, համադրելով և վերլուծելով տարբեր դատողություններ, հանգում է նոր եզրակացությունների:[5]
- Ինդուկցիայի մեթոդ: Սա մասնակի դատողություններից ընդհանուրին հանգելու կամ մասնավոր երևույթներից և փաստերից ելնելով՝ ընդհանուր օրենքների, կանոնների բացահայտման մեթոդն է:[5]
- Դեդուկցիայի մեթոդ: Սա ընդհանուր դատողությունները մասնակի դեպքերի վրա տարածելու կամ ընդհանուր օրենքների ու կանոնների իմացության հիման վրա առանձին փաստերի և երևույթների վերաբերյալ կշռադատումներ անելու մեթոդն է:[5]
- Ուղիղ և հակադարձ կապերի մեթոդ: Երևույթների փոփոխությունների՝ միմյանց վրա ունեցած ազդեցությունը կարող է լինել երկակի. դրանք կամ շարժվում են միևնույն ուղղությամբ կամ հակառակ ուղղություններով: Եթե դրանք շարժվում են միևնույն ուղղությամբ (ենթադրենք՝ երկուսն էլ աճում են, կամ երկուսն էլ նվազում են), ապա այդ երևույթների միջև գոյություն ունի ուղիղ կապ, իսկ եթե շարժվում են հակառակ ուղղությամբ, ապա դրանց միջև կապը հակադարձ է: [1]
- Մաթեմատիկական մեթոդ: Այս մեթոդի էությունն այն է, որ հասարակական, տնտեսական կամ բնական տարբեր

երևույթներ հաճախ արտահայտվում են թվերի միջոցով, իսկ դրանց ուսումնասիրության ժամանակ կիրառվում են վիճակագրական տվյալներ, մաթեմատիկական մոդելներ, տարբեր բանաձևեր և կորեր: [1]

- Վարկածի կամ հիպոթեզի մեթոդ: Այս մեթոդի էությունն այն է, որ ճանաչողության պրոցեսում հետազոտողները առաջ են քաշում դիտարկվող երևույթի կամ օբյեկտի փոփոխության վերաբերյալ իրենց ենթադրությունները, այնուհետև այդ ենթադրությունների շրջանակներում կատարում են հետազոտություն՝ դրանք հաստատելու կամ հերքելու համար:[5]
- Համանմանության մեթոդ: Այս մեթոդի էությունն այն է, որ երբ տարբեր երևույթներ և առարկաներ օժտված են միանման հատկանիշներով, ապա կարելի է վերլուծել դրանցից միայն մեկը կամ մի քանիսը և համանմանության սկզբունքով վերլուծության արդյունքները տարածել մնացած երևույթների և առարկաների վրա, որոնք օժտված են համանման հատկանիշներով: [1]
- Պատմական և տրամաբանական մեթոդ: Ուսումնասիրելով տարբեր հասարակական, տնտեսական և այլ երևույթների զարգացման պատմական ընթացքը՝ կարելի է բացահայտել դրանց զարգացման ներքին տրամաբանությունը ևս, քանի որ դրանք փոխկապակցված են: [1]

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԹԵՄԱ 1. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ենթաթեմաներ

1. Ձեռնարկատիրական գործունեության ծագման և զարգացման նախադրյալները

2. Ձեռնարկատիրական գործունեության հիմնական սահմանումները

3. Ձեռնարկատիրական գործունեության տեսակները

4. Ձեռնարկատիրական գործունեության իրավական ձևակերպումները

5. Ձեռնարկատիրական գործունեությանը բնորոշ հատկանիշները

6. Ձեռնարկատիրական գործունեության օբյեկտը և սուբյեկտը

7. Ձեռնարկատիրական գործունեության զարգացման գործոնները

8. Տեղեկատվության դերը ձեռներեցության մեջ

Գրականություն՝ Մելքումյան Մ. Ս., 2014թ, Бусыгин А. В., 2003г., Лапуста М. Г., 2008г.*:

ԹԵՄԱ 2. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ: ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ենթաթեմաներ

1. Ստեղծագործական մտածելակերպ և բիզնես մտահաղացում

* Նշված են դասընթացի համար առաջարկվող գրականության հեղինակները և տարեթվերը (տես՝ հավելված):

2. Բիզնես հնարավորությունների բացահայտումը և վերլուծությունը

3. Բիզնես գաղափարի նյութականացումը: Բիզնես պլան

4. Ձեռներեցի կարևորագույն հատկանիշներն ու ունակությունները

5. Ձեռնարկատիրական մտածելակերպի ձևավորումը

6. Ձեռներեցի մոտիվացիան

7. Ձեռներեցության մշակույթը և էթիկան

8. Ձեռնարկատիրական հաջողությունը պայմանավորող գործոնները

Գրականություն ՝ Մելքումյան Մ.Ս., 2014թ., Սուվարյան Յու.Մ., 2004թ., Брунова В.И., 2010г., Бусыгин А.В., 2003г., Лапуста М.Г., 2008 г., Наумова С.А., 2003г., Hisrich R.D., Peters M.P., 2017:

ԹԵՄԱ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ենթաթեմաներ

1. Ծառայությունների ոլորտի էությունը

2. Ծառայությունների ոլորտը սոցիալ-տնտեսական համակարգում

3. Զբոսաշրջային ինդուստրիան ծառայությունների ոլորտում

4. Ծառայությունների բնութագրիչներն ու առանձնահատկությունը

5. Ծառայությունների դերը տնտեսության մեջ

6. Ծառայությունների շուկայի բնութագրումը

7. Պետական կարգավորման ուղղությունները ծառայությունների շուկայում

8. Առաջարկը և պահանջարկը ծառայությունների շուկայում

Գրականություն ՝Խաչատրյան Ն.Ն., 2013թ., Սուվարյան Յու.Մ., 2004թ., Виноградова С.А., 2014 г.:

ԹԵՄԱ 4. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՍԵՐՎԻՍՈՒՄ

Ենթաթեմաներ

1. Ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները սերվիսում
2. Սերվիսային գործունեության հիմնական տեսակները, սերվիսային ձեռնարկությունների դասակարգումը
3. Սերվիսային ձեռնարկության հիմնադրումը
4. Սերվիսային ձեռնարկության կազմակերպական կառուցվածքները և կառավարման մոտեցումները
5. Մարդկային ռեսուրսների կառավարումը սերվիսային ձեռնարկություններում
6. Ծառայությունների որակը և մրցունակությունը

Գրականություն՝ Սայադյան Հ.Ռ., 2014թ., Խաչատրյան Ն.Ն., 2013թ., Սուվարյան Յու.Մ., 2004թ., Սուվարյան Յու.Մ., 2002թ., Виноградова С.А., 2014 г., Лойко О.Т., 2003г., Романович Ж.А., Калачев С.Л., 2006г.:

ԹԵՄԱ 5. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ենթաթեմաներ

1. Սերվիսային ձեռնարկության ծախսերի դասակարգումը և բնութագրումը
2. Գնագոյացումը սերվիսի ոլորտում
3. Գնագոյացման առանձնահատկությունները զբոսաշրջության ոլորտում
4. Ծառայությունների ինքնարժեքի հաշվարկը
5. Անվնասաբերության հաշվարկները սերվիսային ձեռնարկություններում
6. Գործառնական լծակի ազդեցությունը սերվիսային ձեռնարկություններում

Գրականություն՝ Սայադյան Հ.Ռ., 2014թ., Խաչատրյան Ն.Ն., 2013թ., Шевчук Д.А., 2008г., Бусыгин А.В., 2003г., Наумова С.А., 2003г.:

ԹԵՄԱ 6. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Ենթաթեմաներ

1. Տնտեսական անվտանգության հասկացությունը
2. Տնտեսական անվտանգության սպառնալիքները
3. Տնտեսական անվտանգության ապահովման ուղղությունները
4. Ռիսկերի նշանակությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ
5. Ռիսկերի դասակարգումը
6. Ռիսկերի կառավարման և գնահատման մեթոդները

Գրականություն՝ Մելքումյան Մ.Ս., 2014թ., Асаул А.Н., Войнаренко М.П., 2004г., Лапуста М.Г., 2008 г.:

ԹԵՄԱ 7. ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՍԵՐՎԻՍԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Ենթաթեմաներ

1. Մարքեթինգի էությունը
2. Մարքեթինգի առանձնահատկությունները սերվիսում
3. Մարքեթինգը սերվիսի տարբեր ճյուղերում
4. Հասարակական սննդի ոլորտի մարքեթինգ
5. Կրթության ոլորտի մարքեթինգ
6. Տեղեկատվական ոլորտի մարքեթինգ
7. Տրանսպորտային ծառայությունների ոլորտի մարքեթինգ
8. Զբոսաշրջային մարքեթինգի առանձնահատկությունները

Գրականություն՝ Զաքարյան Ա.Ե., Սահակյան Շ.Ս., 2013թ., Андрейченко Н.В., Ахлюстина И.С., 2009 г., Бабурин В.А., Гончарова Н.Л., 2014 г.:

ԹԵՄԱ 8. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Ենթաթեմաներ

1. Գործարքների էությունը և տեսակները
2. Գործարքների լուծումը
3. Պայմանագրի էությունը
4. Պայմանագրերի տեսակները
5. Պայմանագրերի կնքումը, փոփոխությունները և լուծումը

Գրականություն՝ Մելքումյան Մ.Ս., 2014թ., Бусыгин А.В., 2003г., Лапуста М.Г., 2008г.:

ԹԵՄԱ 9. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՒՏԸ

Ենթաթեմաներ

1. Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների դասակարգումը

2. Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների առավելությունները և թերությունները

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մակարդակները

4. Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցող կազմակերպությունները և դրանց գործառույթները

5. Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության հիմնական տեսակները

6. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի աջակցման կազմակերպումը ՀՀ-ում

Գրականություն՝ Մելքումյան Մ.Ս., 2014թ., Буров В.Ю., 2011г., Переверзев М.П., 2009г.:

ԹԵՄԱ 10. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ենթաթեմաներ

1. Ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը և էությունը

2. Պետության գործառույթները ձեռնարկատիրության կարգավորման ոլորտում

3. Ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման նպատակները, սկզբունքները, օբյեկտը և ձևերը

4. Ձեռնարկատիրության պետական աջակցությունը

5. Ձեռնարկատիրական գործունեության հարկային կարգավորումը

6. Մրցակցային հարաբերությունների կարգավորման միջազգային փորձը

7. Մրցակցային հարաբերությունների կարգավորումը ՀՀ-ում

Գրականություն ՝ Մելքումյան Մ.Ս., 2014թ., Лапуста М.Г., 2008 г.:

Աղյուսակ 3.1

«Ձեռնարկատիրությունը սերվիսում» դասընթացի աշխատանքային պլան

Թեման	*Դաս., ժ.*	*Գործն., ժ.*
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ	5	4
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ: ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	4	4
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	6	4
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԵՐՎԻՍՈՒՄ	4	4
ՄԵՐՎԻՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ	6	4
ՄԵՐՎԻՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ	4	2
ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԵՐՎԻՍԻ ՈԼՈՐՏՈՒՄ	4	2
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ	4	2
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ	4	2

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ	4	2
Ընդամենը	45	30

Դասընթացի նյութերի ուսուցանման և գործնական պարապմունքների կազմակերպման ընթացքում առաջարկվում է օգտվել հետևյալ մեթոդներից՝

1. ինֆորմատիվ և պրոբլեմահենք դասախոսություն,
2. խմբային աշխատանքներ,
3. իրավիճակների վերլուծություն,
4. մասնակիցների փորձի արդյուքների քննարկում,
5. մտագրոհ:

4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

4.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալ գործնական պարապմունքի նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ձեռնարկատիրական գործունեության էության, դրան տրված սահմանումների, ձեռնարկատիրական գործունեության օբյեկտի, սուբյեկտի և հիմնական տեսակների, ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ գործոնների վերաբերյալ:

Տեսական մաս

Տնտեսագիտական, փիլիսոփայական և այլ գրականություններում կարելի է հանդիպել «ձեռնարկատիրություն» հասկացության տարբեր սահմանումների:

Արևմտյան գրականության մեջ ձեռնարկատիրությունը հաճախ կապվում է արտադրության կապիտալիստական ձևի և մաքսիմալ շահույթի ստացման հետ:

Ն. Սմելզերը ձեռնարկատիրոջը բնորոշում է որպես անհատ, ով կուտակում է կապիտալը և ռիսկի ենթարկելով՝ մայր գումարը ներդնում հավելյալ շահույթ ապահովող գործունեության մեջ:

«Տնտեսագիտություն» աշխատության հեղինակներ Փ. Սամուելսոնը և Ու. Նորդհաուն կարծում են, որ ձեռնարկատիրությունը հաճախ պահանջում է տարբեր կարողություններով օժտված առանձին բնագավառներում մասնագիտացված անձանց համակցում, ովքեր միավորվելով կազմում են գործընկերություն, յուրաքանչյուրը համաձայնում է ապահովել աշխա-

տանքի ու աշխատամիջոցների մի մասը, ստանալ շահույթներ, որոշակի տոկոսներ և, իհարկե, կիսել վնասներն ու պարտքերը:

Ադամ Սմիթը կարծում էր, որ ձեռնարկատերը կապիտալի սեփականատերն է, ով հանուն առևտրային գաղափարների իրականացման դիմում է տնտեսական ռիսկի և ստանում է շահույթ: [3]

Ձեռնարկատիրության տարատեսակները դասակարգվում են ըստ մի շարք հատկանիշների՝ ըստ գործունեության տեսակի, սեփականության ձևի, սեփականատերերի քանակի, կազմակերպաիրավական և կազմակերպատնտեսական ձևերի և այլն:

Ըստ գործունեության ձևի կամ նշանակության՝ ձեռնարկատիրությունը կարելի է բաժանել արտադրական, առևտրային, ֆինանսական, խորհրդատվական, ինժեներական գործունեության և այլն:

Ձեռնարկատիրության դասակարգման հաջորդ հատկանիշը դրանց սեփականության ձևն է: Կախված այն բանից, թե ով է ձեռնարկության սեփականատերը, առանձնացնում են ձեռնարկատիրության հետևյալ տեսակները՝ պետական, մասնավոր, կոլեկտիվ և խառը:

Ձեռնարկատիրական գործունեությունը դասակարգվում է նաև ըստ կազմակերպաիրավական տեսակների:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր և, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Առանձնացնում են կազմակերպաիրավական ձևերի երկու խոշոր խմբեր՝ առևտրային և ոչ առևտրային:

Առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

Տնտեսական ընկերակցությունները երկուսն են՝ լիակատար ընկերակցություններ և վստահության վրա հիմնված ընկերակցություններ:

Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների, բաժնետիրական ընկերությունների ձևով:

Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և օրենքով նախատեսված այլ ձևերով: [3]

Ձեռնարկատիրական գործունեության օբյեկտ են հանդիսանում արտադրական և ոչ արտադրական ոլորտները՝ նորաստեղծությունը, պրոֆեսիոնալ սպորտը, տուրիզմը և այլ ծառայություններ:

Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ կարող են լինել տվյալ երկրի և օտարերկրյա քաղաքացիները կամ նրանց միավորումները:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ են՝ մասնավոր սեփականության առկայությունը, պետության կայուն տնտեսական և սոցիալական քաղաքականությունը, ֆինանսավարկային, արժույթային քաղաքականությունը, տնտեսական ազատության առկայությունը, բանկային արդյունավետ համակարգի առկայությունը, հարկային արտոնությունների սահմանումը, տնտեսվարողների ազատ ելքը դեպի արտաքին շուկա և այլն:

Ձեռներեցության գործոնները պարամետրեր են, որոնք որոշում են ձեռներեցական ֆունկցիայի հատկությունների դրսևորման հնարավորությունները և բնույթը:

Տարբերում են արտաքին և ներքին ձեռներեցության գործոններ:

Արտաքին գործոններն են՝

- բնական-ժողովրդագրական,
- սոցիալ-մշակութային,
- տեխնոլոգիական,
- տնտեսական,
- ինստիտուցիոնալ,
- իրավական,
- քաղաքական:

Ներքին գործոններն արտացոլում են սեփականատիրական հարաբերությունների զարգացվածությունը, ամենից առաջ մասնավոր սեփականության երաշխիքները՝ շուկայի գործակալների տնտեսական մոտիվացիայի և ռեսուրսների արդյունավետ օգտագործման աստիճանը, տնտեսական գործունեության իրականացման հնարավորությունները, կապիտալի շարժունակությունը, ձեռնարկատիրական հատկությունների միավորմանը և մոբիլիզացմանը նպաստող սեփականության հարաբերությունների դեմոկրատացումը: Ներքին գործոններից են նաև տնտեսական բջիջների ներքին կազմակերպական առանձնահատկությունները, որոնք անմիջականորեն ազդում են ձեռնարկատիրության ֆունկցիոնալ հատկանիշների բովանդակության և իրացման ձևերի վրա (կազմակերպման մասշտաբայնություն, հիերարխիկ կառուցվածքի առանձնահատկությունները, կազմակերպության կառավարման ձևերը և բնույթը: [3]

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

1. Ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ քննարկված սահմանումները: *Կատարման ձևը՝ ազատ շարադրանք:*

2. Թվարկել ձեռնարկատիրական գործունեության իրավակազմակերպական ձևերը: *Լրացնել՝ աղյուսակը:*

2.1 Ըստ հիմնական հատկանիշների բնութագրել ձեռնարկատիրական գործունեության իրավակազմակերպական ձևերը: *Բանավոր:*

Աղյուսակ 4.1

Իրավաբանական անձինք
1. Առևտրային կազմակերպություններ
1.1 Տնտեսական ընկերակցություններ
1.1.1 Լիակատար ընկերակցություններ
1.1.2
1.2 Տնտեսական ընկերություններ
1.2.1 Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
1.2.2
1.2.3
ա)
բ)
2. Ոչ առևտրային կազմակերպություններ
2.1 Հասարակական կազմակերպություններ
2.2
2.3
2.4

3. Թվարկել ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար անհրաժեշտ պայմանները և ձեռնարկատիրության զարգացման վրա ազդող գործոնները: *Լրացնե՛ք աղյուսակը:*

Աղյուսակ 4.2

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման պայմանները	Ձեռնարկատիրության զարգացման վրա ազդող գործոնները	
	Արտաքին գործոններ	Ներքին գործոններ
1. Մասնավոր սեփականության առկայությունը	1. Բնական-ժողովրդագրական	1. Որոնք արտացոլում են սեփականատիրական հարաբերությունների զարգացվածությունը
2. Պետության կայուն տնտեսական և սոցիալական քաղաքականությունը	2. Սոցիալ-մշակութային	

4.2. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՍԵՐՎԻՍՈՒՄ

Գործնական պարապմունքի նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Տեսական մաս

Ներկայումս գոյություն չունի «սերվիս» հասկացության միանշանակ սահմանում: Գրականության մեջ սերվիսը հաճախ նույնականացվում է ծառայության հետ: Որոշ հեղինակներ էլ տարանջատում են այդ երկու հասկացությունները:

Սերվիսի վերաբերյալ տարբեր սահմանումները հիմնականում հանգում են այն գաղափարին, որ սերվիսը գործունեության տեսակ է, որի նպատակն է մարդկանց կամ հասարակության պահանջմունքների բավարարումը:

Սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության հիմնական ուղղություններն են.

- առևտրային ծառայություններ,
- սննդի և գիշերակացի ծառայություններ (հասարակական սննդի կետեր, հյուրանոցներ և այլն),
- տրանսպորտային ծառայություններ,
- կապի և տեղեկատվական ծառայություններ,
- մատակարարման ծառայություններ,
- գիտական ոլորտի ծառայություններ,
- առողջապահական ծառայություններ,
- կենցաղային սպասարկման ծառայություններ,

- անհատական բնույթի ծառայություններ (վարսահարդարման, կոշկակարի ծառայություններ, ֆոտոնկարահանման ծառայություններ և այլն)
- պետական կառավարման ծառայություններ: [6]

Ծառայությունների շուկան աչքի է ընկնում մի շարք բնորոշիչ առանձնահատկություններով, այսպես՝

- զարգացման դինամիզմի բարձր աստիճան,
- տարածքային սեգմենտավորում,
- տարածման գլոբոլ բնույթը,
- շրջանառու կապիտալի պտույտի բարձր արագությունը,
- շուկայական պահանջարկի փոփոխություններին ծառայության մատուցողների արձագանքման արագությունը,
- ծառայություն մատուցողի և սպառողի միջև սերտ շփումը,
- ծառայությունների մատուցման ուղղությունների լայն շրջանակը,
- նորամուծությունների վաճառահանման բարձր աստիճանը,
- սպառողական պահանջմունքի բավարարման անորոշությունը,
- շուկայի անհամաչափ զարգացումը: [2]

Սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ է հիմնել կազմակերպություն կամ հանդես գալ որպես ֆիզիկական անձ՝ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակում:

Ձեռնարկության հիմնադրման գործընթացը կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, որի նորմերով սահմանվում են հիմնադիր փաստաթղթերի նախագծերի մշակման, հիմնադիր ժողովի անցկացման, հիմնադիր փաստաթղթերի գրանցման նախապատրաստման, ձեռնարկության իրավաբանական գրանց-

ման, բանկում հաշվարկային հաշվի բացման ընթացակարգերը և դրանց հաջորդականությունը։

Սերվիսային ձեռնարկություններում, որտեղ գոյություն ունի անմիջական շփում ծառայությունը մատուցողի և այն սպառողի միջև, հատկապես կարևոր է աշխատակիցների շրջանում դրական մթնոլորտի և մոտիվացիայի ապահովումը։ Այս առումով մենեջերը պետք է ապահովի աշխատանքի արդյունքի վրա ազդող հետևյալ սկզբունքները.

- վստահությունը աշխատակիցների նկատմամբ,
- աշխատակիցների բավարարվածությունը աշխատանքից՝ վարձատրություն, ինքնահաստատում, հասարակության մեջ ճանաչվածություն,
- կոնստրուկտիվություն,
- սպասարկման որակի ապահովում,
- ձեռնարկության դրական կերպարի ձևավորում: [4]

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

1. Թվարկել սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության հիմնական ուղղությունները: *Ազատ շարադրանք:*

2. Բնութագրել ծառայությունների շուկայի առանձնահատկությունները: *Լրացնել՝ աղյուսակը:*

Աղյուսակ 4.3

Առանձնահատկությունը	**Բնութագիրը**
1. Զարգացման դինամիզմի բարձր աստիճան	
2. Տարածքային սեգմենտավորում	
3. Տարածման գլոբալ բնույթը	

4. Շրջանառու կապիտալի պտույտի բարձր արագությունը	
5. Շուկայական պահանջարկի փոփոխություններին ծառայության մատուցողների արձագանքման արագությունը	
6. Ծառայություն մատուցողի և սպառողի միջև սերտ շփումը	
7. Ծառայությունների մատուցման ուղղությունների լայն շրջանակը	
8. Նորամուծությունների վաճառահանման բարձր աստիճանը	
9. Սպառողական պահանջմունքի բավարարման անորոշությունը	
10. Շուկայի անհամաչափ զարգացումը	

3. Ներկայացնել կազմակերպության կանոնադրության վավերապայմանները՝ համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի։ *Լրացնե՛ք աղյուսակը:*

Աղյուսակ 4.4

Կանոնադրության վավերապայմանները
1. Իրավաբանական անձի անվանումը
2. Գտնվելու վայրը
4. Հիմնադրման ժամկետը

3.Կանոնադրական կապիտալի չափը
5. Ընկերության հիմնադիրների կամ մասնակիցների ցանկը

4.3 ՄԵՐՎԻՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Գործնական պարապմունքի նպատակն ուսանողների մոտ սերվիսային ձեռնարկության ծախսերի դասակարգման, ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման մեթոդների, ձեռնարկության տնտեսական գործունեության անվնասաբերության կետի հաշվարկի, ինչպես նաև զբոսաշրջային ոլորտում գնագոյացման առանձնահատկությունների վերաբերյալ ստացված գիտելիքների ամրապնդումն է:

Տեսական մաս

Ձեռնարկատիրական գործունեության գլխավոր նպատակը շահույթի ստացումն է, որն իրենից ներկայացնում է կազմակերպության եկամուտների և ծախսերի տարբերությունը:

Գոյություն ունեն ծախսումների դասակարգման տարբեր մոտեցումներ: Այսպես՝ ըստ արտադրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառման հատկության՝ բոլոր ծախսումները խմբավորվում են ըստ ուղղակի ծախսերի և անուղղակի ծախսե-

րի: Անուղղակի ծախսումներն էլ իրենց հերթին կարող են լինել անուղղակի արտադրական և անուղղակի ոչ արտադրական ծախսումներ:

Ըստ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ծավալից ունեցած կախվածության՝ ծախսերը բաժանվում են հաստատուն ծախսումների և փոփոխուն ծախսումների:

Առանձնացնում են ծախսումների դասակարգման այլ խմբեր ևս, ինչպես օրինակ՝ ընթացիկ և միանվագ, արտադրական և կոմերցիոն և այլն:


Ուղղակի են անվանում այն ծախսումները, որոնք անմիջականորեն հնարավոր է վերագրել արտադրանքի կամ ծառայությունների մեկ միավորի ինքնարժեքին:

Անուղղակի ծախսումները արտադրանքի և ծառայությունների միավորների միջև պետք է բաշխվեն կազմակերպության կողմից նախօրոք որոշված գործակիցներով և համամասնությամբ:


Հաստատուն են համարվում այն ծախսումները, որոնք, անկախ արտադրության ծավալներից և դրանց ավելացումից կամ նվազումից, մնում են հաստատուն, օրինակ՝ ադմինիստրատիվ անձնակազմի աշխատավարձը, վարձակալական վճարները, գործունեության լիցենզավորման վճարները և այլն:

Փոփոխուն են անվանում այն ծախսումները, որոնք արտադրության ծավալի ավելացման կամ նվազման հետ համապատասխանաբար աճում կամ նվազում են:

Հաստատուն և փոփոխուն ծախսումների կախվածությունը արտադրության կամ ծառայությունների մատուցման ծավալից գրաֆիկորեն ներկայացվում է հետևյալ կերպ.



Գծապատկեր 4.1 Հաստատուն ծախսումների կախվածությունը թողարկման ծավալից




Գծապատկեր 4.2 Փոփոխուն ծախսումների կախվածությունը թողարկման ծավալից


Վերևում ներկայացվածը վերաբերում էր արտադրանքի ամբողջ ծավալի համար հաշվարկված հաստատուն և փոփոխուն ծախսերին: Իսկ միավոր արտադրանքի համար հաշվարկվող հաստատուն ծախսերը, թողարկման ծավալի աճին զուգընթաց նվազում են և, ընդհակառակը, աճում են դրա նվազմանը հետ մեկտեղ:

Միավորի փոփոխուն ծախսումներն իրենց հերթին կախված չեն թողարկման ծավալի փոփոխությունից:

Փորձենք գրաֆիկորեն արտահայտել նաև միավորին բաժին ընկնող հաստատուն և փոփոխուն ծախսերի կախվածությունը արտադրության ծավալից:



Գծապատկեր 4.3 Միավոր հաստատուն ծախսումների կախվածությունը թողարկման ծավալից



Գծապատկեր 4.4 Միավոր փոփոխուն ծախսումների կախվածությունը թողարկման ծավալից

Ծախսերի բաժանումը հաստատուն և փոփոխուն ծախսերի ու դրանց առանձին հաշվառումը հանդիսանում է ծախսերի հաշվառման դիրեքթ-քոսթինգ (direct-costing) համակարգի հիմքն է:

Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս ճիշտ գնահատել հաստատուն ծախսերի ազդեցությունը ապրանքների կամ ծառայությունների իրացումից շահույթի մեծության վրա:

Այսպիսով՝ հաշվառման այս եղանակը հնարավորություն է տալիս ավելի արժանահավատ կերպով կանխատեսել գների և իրացման ծավալների ապագա փոփոխությունների ազդեցությունը իրացումից շահույթի վրա և ավելի ճշգրիտ որոշումներ կայացնել գնագոյացման հետ կապված հարցերում:

Տնտեսական գործունեության յուրաքանչյուր տեսակի համար կարևոր նախապայման է անվնասաբերության կետի որոշումը:

Անվնասաբերության կետը ցույց է տալիս, թե ապրանքի կամ ծառայությունների ինչ քանակ է անհրաժեշտ իրացնել, որպեսզի ծածկվեն բոլոր ծախսումները:

Անվնասաբերության կետում իրացումից հասույթը և ծախսերը հավասարվում են, իսկ շահույթը հավասարվում է զրոյի:

Անվնասաբերության կետը կարող է չափվել ինչպես բնական, այնպես էլ արժեքային ցուցանիշներով:

Անվնասաբեր արտադրանքի կամ ծառայությունների ծավալը կարող է հաշվարկվել հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{Ծ_{հաստ}}{Գ_{միավ} - Ծ^{միավ}_{փոփ}},$$

որտեղ Q-ն անվնասաբեր արտադրանքի ծավալն է,

$Ծ_{հաստ}$ -ը համախառն հաստատուն ծախսումներն են,

$Գ_{միավ}$ -ը միավորի գինն է,

$Ծ^{միավ}_{փոփ}$ -ը միավորի փոփոխուն ծախսումներն են:

Հասույթի շեմային ծավալը, այսինքն՝ հասույթի այն չափը, երբ հասույթն ու ծախսերը հավասարվում են, և շահույթը զրոյական է, որոշվում է հետևյալ կերպ.

$$Հ_{շեմ} = \frac{Ծ_{հաստ}}{Գ_{հ.մ.}}$$


որտեղ $Հ_{շեմ}$ -ը շեմային հասույթի ծավալն է,

$Ծ_{հաստ}$ -ը համախառն հաստատուն ծախսումներն են,

$Գ_{հ.մ.}$ -ը համախառն մարժայի գործակիցն է, որն էլ իր հերթին որոշվում է հետևյալ կերպ.

$$Գ_{հ.մ.} = \frac{Մարժա}{Հասույթ}$$

Անվնասաբերության կետը գրաֆիկորեն կարելի է ստանալ հետևյալ կերպ.



Գծապատկեր 4.5 Անվնասաբերության գրաֆիկը

Գործառնական լծակի էֆեկտը կամ ազդեցությունը ($Ա_{գլ.}$) ցույց է տալիս, թե հասույթի որոշակի փոփոխության դեպքում քանի անգամ ավելի արագ է աճում շահույթը: Այն արտահայտենք բանաձևով.[4]

$$Ա_{գլ.} = \frac{Մարժա}{Շահույթ}$$

Ծառայությունների ոլորտում գնագոյացումն ունի որոշակի առանձնահատկություններ, այսպես.

- Ծառայությունների որոշ տեսակներ (կրթություն, առողջապահություն) պետական հոգածության և սուբսիդավորման շնորհիվ համեմատաբար մատչելի են դառնում:
- Սեզոնայնության մեծ ազդեցություն:

- Եկամուտների նվազման հետևանքով ծառայությունների որոշ տեսակներ տեղափոխվում են ինքնասպասարկման ոլորտ, ինչն էլ նվազեցնելով պահանջարկը՝ բերում է գների իջեցման։
- Երկաստիճան գների սահմանում՝ մուտքավճար և ծառայություններից օգտվելու վճար։
- Հանրային ծառայությունների ոլորտում գործում են սակագներ (տրանսպորտ, ջրամատակարարում և այլն)։
- Որոշ դեպքերում սպառողին կարող են պարտադրվել սուբյեկտիվ գներ (ֆինանսական, իրավաբանական, աուդիտորական ծառայություններ)՝ կատարելով գնային դիսկրիմինացիա։
- Ծառայությունների շուկայում գների բարձրացումն ավելի մեծ դժվարություններ է ներկայացնում, քանի որ այն հիմնականում առնչվում է բնակչության սոցիալական խնդիրների լուծման հետ: [2]

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

1. Թվարկել և բնութագրել ձեռնարկատիրական գործունեության ծախսերն ըստ տարբեր հատկանիշներով դրանց դասակարգման խմբերի: *Ազատ շարադրանք:*

2. Լուծել խնդիրը։

Զբոսաշրջային կազմակերպության վաճառքները որոշակի արտագնա տուրփաթեթի գծով կազմում են տարեկան 500 փաթեթ: Առկա է մարքեթինգային տեղեկատվություն առ այն, որ փաթեթի գնի 5%-ով նվազեցման դեպքում վաճառքի ծավալները կավելանան 10%-ով՝ կազմելով տարեկան 550 փաթեթ (500+(500*10/100)=550 փաթեթ):

Հայտնի է, որ

- տուրփաթեթի գինը կազմում է 200 պ.մ.,
- իրացված տուրփաթեթների ընդհանուր ինքնարժեքը կազմում է 80.000 պ.մ.,
- միավորի ինքնարժեքն է՝ 160 պ.մ. (80.000/500 =160պ.մ.),
- ընդհանուր հաստատուն ծախսերը կազմում են 50.000 պ.մ.,
- ընդհանուր փոփոխուն ծախսերը՝ 30.000 պ.մ.,
- միավորի փոփոխուն ծախսերը կկազմեն 60 պ.մ (30.000/500 =60պ.մ.):

Պահանջվում է հաշվարկել գների 5%-ով նվազեցման և վաճառքի ծավալների 10%-ով ավելացման դեպքում շահույթի հնարավոր փոփոխությունը (լրիվ ինքնարժեքի մեթոդով և դիրեքթ-քոսթինգ մեթոդով):

Լուծում

Լրիվ ինքնարժեքի մեթոդ

Միավոր տուրփաթեթից ստացվող շահույթը (տեսակարար շահույթ) կկազմի՝

$Շ_{միավ}$ = $Գ_{միավ}$ - $Ի_{միավ}$ = 200պ.մ. – 160պ.մ. = 40 պ.մ.:

Ընդհանուր շահույթը (համախառն շահույթ) կկազմի՝

$Շ_{ընդ}$ = Ք x $Շ_{միավ}$= 500 x 40պ.մ. = 20.000 պ.մ:

Նույն հաշվարկը կատարենք նոր գնի և իրացման նոր ծավալի համար՝

$Շ_{միավ}$ = $Գ_{միավ}$ - $Ի_{միավ}$ = 190պ.մ. – 160պ.մ. = 30 պ.մ.

$Շ_{ընդ}$ = Ք x $Շ_{միավ}$ = 550 x 30պ.մ. = 16.500 պ.մ.:

Ինչպես տեսանք, գների 5%-ով նվազեցման և վաճառքի ծավալների 10%-ով ավելացման դեպքում շահույթը նվազում է 3.500 պ.մ.-ով (20.000պ.մ. – 16.500պ.մ.):

Դիրեքթ-քոսթինգ եղանակ

Նույն հաշվարկն իրականացնենք նաև դիրեքթ-քոսթինգ եղանակով՝ առանձնացնելով հաստատուն և փոփոխուն ծախսումները։

Ելակետային տվյալների համաձայն տեսակարար մարժան կկազմի՝

$$Մ_{տես} = Գ_{միավ} – Ծ_{տես.փոփ} = 200պ.մ. – 60պ.մ. = 140պ.մ.:$$

Համախառն մարժան կկազմի՝

$$Մ_{ընդ} = Ք \text{ x } Մ_{տես} = 500 \text{ x } 140պ.մ. = 70.000 \text{ պ.մ.}:$$

Ընդհանուր շահույթը (համախառն շահույթ) կկազմի՝

$$Շ_{ընդ} = Մ_{ընդ} – Ծ_{հաստ} = 70.000պ.մ. – 50.000պ.մ. = 20.000պ.մ.:$$

Ինչպես տեսնում ենք, երկու մեթոդի դեպքում էլ ընթացիկ տարվա համախառն շահույթը կազմում է 20.000պ.մ., և երկու մեթոդն էլ ճիշտ են արտացոլում կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքները:

Այժմ փորձենք դիրեքթ-քոսթինգ եղանակի միջոցով հաշվարկել շահույթի հնարավոր փոփոխությունը գների և իրացման ծավալների փոփոխության դեպքում.

$$Մ_{տես} = Գ_{միավ} – Ծ_{տես.փոփ} = 190պ.մ. – 60պ.մ. = 130պ.մ.$$

$$Մ_{ընդ} = Ք \text{ x } Մ_{տես} = 550 \text{ x } 130պ.մ. = 71.500պ.մ.$$

$$Շ_{ընդ} = Մ_{ընդ} – Ծ_{հաստ} = 71.500պ.մ. – 50.000պ.մ. = 21.500պ.մ.:$$

Ինչպես տեսանք, դիրեքթ-քոսթինգ եղանակով հաշվարկն իրականացնելու դեպքում պարզվում է, որ գների 5%-ով նվազեցման և վաճառքի ծավալների 10%-ով ավելացման դեպքում շահույթը ոչ թե կնվազի (ինչպես ցույց է տալիս լրիվ ինքնարժեքի եղանակով կատարված հաշվարկը), այլ իրականում կավելանա 1.500 պ.մ.-ով:

Խնդիրն այն է, որ լրիվ ինքնարժեքի եղանակով հաշվարկն իրականացնելու դեպքում անտեսվում է իրացման ծավալների ավելացման դեպքում հաստատուն ծախսերի՝ միավորի ինքնարժե-

քում նվազելու փաստը, և տուրփաթեթի ինքնարժեքն ընդունվում է անփոփոխ, մինչդեռ միավորի ինքնարժեքը նվազում է՝ հաստատուն ծախսերը իրացված տուրփաթեթների ավելի մեծ ծավալի վրա բաշխելու հետևանքով:

Ինքնարժեքը հաստատուն և փոփոխուն ծախսերի բաժանելու դեպքում պատկերն ավելի ճշգրիտ է դառնում, և, կարելի է ասել, որ ծախսերի հաշվառման դիրեքթ-քոսթինգ եղանակը գների և իրացման ծավալների փոփոխության դեպքում շահույթի հնարավոր փոփոխության կանխատեսման ճշգրիտ եղանակ է:

3. Նախորդ խնդրում ներկայացված կազմակերպության համապատասխան տվյալների հիման վրա

3.1 Հաշվարկել զբոսաշրջային կազմակերպության անվնասաբերության կետը.

$$Q = \frac{Ծ_{հաստ}}{Գ_{միավ} - Ծ^{միավ}_{փոփ}} = \frac{50.000\ պ.մ.}{200պ.մ. - 60պ.մ.} \approx 357\ հատ:$$

3.2 *Հաշվարկել հաստույթի շեմային ծավալը:*

Նախ հաշվարկենք համախառն մարժայի գործակիցը.

$$Գ_{հ.մ.} = \frac{Մարժա}{Հասույթ} = \frac{70.000\ պ.մ.}{100.000պ.մ.} = 0.7$$

$$Հ_{շեմ} = \frac{Ծ_{հաստ}}{Գ_{հ.մ.}} = \frac{50.000\ պ.մ.}{0.7} \approx 71,429պ.մ.:$$

3.3. Հաշվարկել գործառնական լծակի էֆեկտը.

$$Ա_{գ.լ.} = \frac{Մարժա}{Շահույթ} = \frac{70.000\ պ.մ.}{20.000պ.մ.} = 3.5:$$

4.4 ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Գործնական պարապմունքի նպատակն է ուսանողների մոտ ամրապնդել փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի, այդ ոլորտի սուբյեկտների դասակարգման չափանիշները, դրանց տնտեսական առավելությունները և թերությունները, ոլորտին ցու-

ցաբերվող պետական աջակցության մոտեցումների վերաբերյալ գիտելիքները:

Տեսական մաս

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն է: Այն շուկայական տնտեսության արմատավորման և կայացման հիմնական երաշխիքն է:

Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները դասակարգվում են.

- *գերփոքր*՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.
- *փոքր*՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.
- *միջին*՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը լուծում է բազմաթիվ կարևոր խնդիրներ.

- շուկայական տնտեսության համար ապահովում է անհրաժեշտ շարժունակություն,
- օգտագործելով հումքի տեղական աղբյուրները՝ ոչ մեծ կապիտալ ներդրումների միջոցով արտադրում է ապրանքներ և ծառայություններ, որոնք նշանակալիորեն նվազեցնում են երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից,
- նոր ՓՄՁ-ների ստեղծմամբ հաճախ ավելի արդյունավետ է ընթանում պարապուրդի մատնված և ոչ շահութաբեր խոշոր կազմակերպությունների վերակառուցման և արդիականացման գործընթացը,
- ՓՄՁ ոլորտում նկատելի է նորարարական ՓՄՁ-երի թվի ավելացումը, ինչը նպաստում է նորարարությունների ներդրման և առևտրայնացման գործընթացին,
- ոչ մեծ կապիտալ ներդրումների միջոցով և համեմատաբար կարճ ժամանակահատվածում ապահովում է խոշոր կազմակերպություններից ազատված աշխատուժի համար զգալի թվով նոր աշխատատեղեր՝ լուծելով սոցիալական լուրջ խնդիրներ,
- ՓՄՁ-երը, լինելով խիստ ճկուն, շատ արագ են հարմարվում շուկայի պահանջներին՝ յուրացնելով նոր ապրանքների արտադրությունը և սպասարկման արդիական ձևերը:
- ՓՄՁ-երի գործունեության ընդլայնումը ստեղծում է ձեռնարկատիրությանն աջակցող միջավայր և մրցակցային դաշտ, առանց որոնց անհնար է շուկայական տնտեսության գոյությունը,
- ՓՄՁ-երի զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման հիմնական պայմանն է:

Սակայն նշենք, որ ՓՄՁ-երը առավելությունների հետ միասին ունեն նաև թերություններ: Այսպես՝

- բարձր է ռիսկի մակարդակը, որով էլ պայմանավորված է շուկայում զբաղեցրած անկայուն դիրքը,
- խոշոր ընկերություններից կախվածությունը,
- լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման դժվարությունները,
- սեփական բիզնեսի կառավարման գործում ոչ արհեստավարժ լինելը,
- պայմանագրերի կնքման ժամանակ գործընկերների կողմից ցուցաբերվող անվստահությունը և զգուշությունը,
- ինքնաշահագործումը և արտաժամյա աշխատանքը,
- փոփոխությունների նկատմամբ բարձր զգայունությունը: [3]

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտին աջակցությունը ցուցաբերվում է ենթակառուցվածքների երեք տարբեր մակարդակներում.

1. մակրոմակարդակ՝ կառավարություն, համապատասխան նախարարություններ և նրանց ստորաբաժանումները,

2. միջին մակարդակ՝ հասարակական և պետական հաստատություններ, ինչպիսիք են միությունները, առևտրային պալատները և ասոցիացիաները,

3. միկրոմակարդակ՝ կազմակերպություններ, որոնք հիմնադրվել են փոքր և միջին ձեռնարկություններին հատուկ նպատակային օժանդակություն իրականացնելու համար:

Պետության կողմից ՓՄՁ ոլորտին ցուցաբերվող ֆինանսական աջակցության շրջանակում իրականացվում են հետևյալ գործառույթները՝

- վարկերի անմիջական տրամադրում,

- երաշխիքների տրամադրում ֆինանսավորող կազմակերպություններին,
- տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում:

Փոքր և միջին ձեռնարկությունների թերությունների վերացման և առավելությունների դրսևորման արդյունավետ տարբերակ է վերջինիս գործունեության համակցումը խոշոր կազմակերպությունների հետ: ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների համակցումն ապահովում է հզոր դրական սիներգետիկ էֆեկտ: Համակցման հիմնական ձևերն են.

- կապալը,
- ֆրանչայզինգը,
- կլաստերների ձևավորումը,
- տեխնոպարկերը,
- ձեռնարկությունների ինկուբատորները: [3]

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

1. Ներկայացնել ՓՄՁ ոլորտի դերն ու նշանակությունը տնտեսության մեջ: *Կատարման ձևը՝ ազատ շարադրանք:*

2. Թվարկել ՓՄՁ ոլորտի ձեռնարկությունների առավելություններն ու թերությունները: *Լրացնել աղյուսակը:*

Աղյուսակ 4.5

ՓՄՁ ոլորտի ձեռնարկությունների առավելություններն ու թերությունները	
Առավելություններ	**Թերություններ**
1. Շուկայական տնտեսությանը ապահովում է անհրաժեշտ շարժունակություն	1. Բարձր է ռիսկի մակարդակը, որով էլ պայմանավորված է շուկայում զբաղեցրած անկայուն դիրքը

2. Ոչ մեծ կապիտալ ներդրումների միջոցով, օգտագործելով հումքի տեղական աղբյուրները, արտադրում է ապրանքներ և ծառայություններ, որոնք նշանակալիորեն նվազեցնում են երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից	2. Խոշոր ընկերություններից կախվածությունը
3. ՓՄՁ-երի զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման հիմնական պայմանն է	3. Ինքնաշահագործումը և արտաժամյա աշխատանքը

3. Ներկայացնել ձեռնարկությունների դասակարգման չափանիշները՝ ըստ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի: *Լրացնել՝ աղյուսակը:*

Աղյուսակ 4.6

Ձեռնարկության տեսակը	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը	Նախորդ տարվա տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը
Գերփոքր	մինչև 10 մարդ		
Փոքր		մինչև 500 մլն դրամ	
Միջին			մինչև 1000 մլն դրամ

4.5 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԿՈՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գործնական պարապմունքի նպատակն է ամրապնդել ուսանողների ստացած գիտելիքները ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտության, դրա հիմնական ուղղությունների և ձևերի վերաբերյալ:

Տեսական մաս

Ձեռնարկատիրության պետական կարգավորումը պետության ազդեցությունն է տնտեսվարող սուբյեկտների և շուկայական ենթակառուցվածքների գործունեության վրա, որը նպատակ ունի ստեղծելու ձեռնարկատիրության զարգացման նորմալ պայմաններ:

Ըստ ազդեցության օբյեկտի՝ ձեռնարկատիրության պետական կարգավորումը իրականացվում է երեք հիմնական ուղղություններով.

- ռեսուրսների կարգավորում,
- արտադրության կարգավորում,
- ֆինանսների կարգավորում:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրության պետական կարգավորումը ներառում է.

1 շուկայի մասնակիցների տեղեկացումը տնտեսության վիճակի և դրա զարգացման հեռանկարների մասին, ինչը թույլ կտա տնտեսվարող սուբյեկտներին մշակել սեփական շուկայական վարքագիծը,

2 տնտեսական քաղաքականության կարևոր միջոցառումների հիմնավորումը, ինչը թույլ կտա տնտեսվարող սուբյեկտների մոտ ձևավորելու ռացիոնալ սպասումներ և պլանավորելու իրենց գործունեությունը՝ դրան համապատասխան,

3 տնտեսության պետական հատվածի զարգացման միջոցառումների իրականացում: Հասարակական բարիքների արտադրությունը և մատուցումը դուրս է շուկայական մեխանիզմների ազդեցությունից և ենթակա է պետական կարգավորման:

Լայն իմաստով ձեռնարկատիրության պետական կարգավորումը (մակրոտնտեսական կարգավորում), մասնավորապես՝ հարկաբյուջետային քաղաքականությունը, մակրոտնտեսական հավասարակշռության ապահովումը, դրամաշրջանառության կարգավորումը և փոխանակային կուրսերի կարգավորումը, երկրում ձևավորում են բարենպաստ տնտեսական միջավայր և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ:

Նեղ իմաստով ձեռնարկատիրության պետական կարգավորումը (բուն ձեռնարկատիրության կարգավորումը) ստեղծում է

ձեռնարկատիրական գործունեության ձևավորման և զարգացման օրենսդրական և իրավական հիմքեր, սահմանում է մասնավոր սեփականության իրավունքը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու շրջանակները և պայմանները, հարկային, վարկային կանոնները և այլն: Այն ուղղված է նաև միջձեռնարկային, պետության և ձեռնարկության, գործատուի և վարձու աշխատողի հարաբերությունների կարգավորմանը, ձեռնարկատիրության զարգացումը խթանող միջոցառումների մշակմանը (պետական պատվերներ, տարբեր արտոնություններ, ՓՄՁ աջակցություն և այլն):

Արդյունավետ ձեռնարկատիրության ձևավորման համար շատ կարևոր է մրցակցային միջավայրի ձևավորումը և հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը:

Ձեռնարկատիրության պետական կարգավորման տեսանկյունից պետության գործառույթներն են.

1. Ձեռնարկատիրության զարգացման իրավական բազայի ձևավորում: Այն ներառում է շուկայի բոլոր մասնակիցների համար հավասար խաղի կանոնների սահմանումը և պետության կողմից սեփականության իրավունքի երաշխավորումը:

2. Մրցակցության պաշտպանություն: Այս նպատակով պետությունը ընդունում է հակամենաշնորհային օրենքներ, որոնց հիման վրա վերահսկողություն է սահմանում մենաշնորհային դիրք ունեցող ձեռնարկությունների գների, արտադրանքի և ծառայությունների մատուցման որակի վրա: Պետական մարմինները խոչընդոտում են ֆիրմաների միաձուլմանը, իրականացնում են մեծ ֆիրմաների հակախոշորացում, դատական կարգով գանձում են անօրինական շահույթը և այլն:

3. Օգտագործելով հարկային և բյուջետային համակարգերը՝ պետությունը տրամադրում է հասարակական բարիքներ:

4. Ձեռնարկատիրական գործունեության արդյունքում արձանագրվող բացասական արտաքին էֆեկտի նվազեցում: Բացասական արտաքին էֆեկտը տնտեսական գործարքի մասնակիցների բացասական ազդեցությունն է երրորդ անձանց վրա. դրա տարատեսակ է շրջակա միջավայրի աղտոտումը: [3]

Հիմնականում ընդունված է տարբերել պետական տնտեսական քաղաքականության հետևյալ ձևերը՝ ֆիսկալ (հարկաբյուջետային), մոնետար (դրամավարկային) և արտաքին տնտեսական քաղաքականություն:

Հարկաբյուջետային քաղաքականությունը այնպիսի պետական միջոցառումների ամբողջություն է, որոնք ուղղված են ֆինանսական ռեսուրսների ձևավորմանն ու երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների նպատակով դրանց օգտագործմանը:

Հարկաբյուջետային քաղաքականության լծակներն են հարկերը ու պետական ծախսերը: Հարկային քաղաքականության նպատակն է ստեղծել այնպիսի հարկային համակարգ, որը նվազագույնի կհասցնի տնտեսության վրա հարկերի ունեցած խաթարիչ ազդեցությունը և կապահովի առավելագույն եկամուտ պետության համար:

Հարկային քաղաքականությամբ պետությունն ազդում է սպառման մակարդակի վրա, քանի որ հարկերի փոփոխությունը, օրինակ՝ բարձրացումը, այլ հավասար պայմաններում կրճատում է անձնական տնօրինվող եկամուտը և, հետևաբար, այդ եկամտից սպառմանն ուղղվող մասը: Հարկի յուրաքանչյուր տեսակի փոփոխությունը տարբեր ազդեցություն է ունենում տնտեսության վրա: Օրինակ՝ եկամտահարկի բարձրացումը կարող է նվազեցնել աշխատելու ցանկությունը, իսկ վաճառքից գանձվող հարկերը նման էֆեկտ չեն ունենում:

Հարկային քաղաքականությամբ պետությունն ազդում է նաև ներդրումային պահանջարկի վրա և անհրաժեշտության դեպքում

համապատասխան քաղաքականությամբ կարող է խթանել ներդրումները կամ կաշկանդել դրանց աճը:


Տնտեսագիտության մեջ կան պետության հարկային քաղաքականության, հարկային դրույքների և հարկային եկամուտների վերաբերյալ տարբեր մոտեցումներ: Դրանցից հիշատակության է արժանի առաջարկի տնտեսագիտությունը, որի ներկայացուցիչներից են Մ. Բերսին, Գ. Ստեյնին, Մ. Ուենդեյբաումը, Ա. Ուոլտերսը, Ա. Լաֆֆենը: Այս տեսության հիմնական գաղափարները հանգում են հետևյալին.

- ցածր հարկերը կնպաստեն տնտեսական աճին, մեծ հարկային մուտքերին, և դրանց իջեցման հետևանքով կլրացվեն պետության հարկային եկամուտների կորուստներն ապագայում,
- բարձր հարկերը աշխատանքի բացասական խթաններ են, և հարկերի իջեցումը կմեծացնի աշխատանքի առաջարկը,
- ցածր դրույքաչափերը հզոր ազդակ են արտադրության ծավալների ավելացման համար, որը կմեծացնի ամբողջական եկամուտը, հետևաբար նաև հարկային մուտքերը,
- ցածր դրույքաչափերը, նպաստելով արտադրանքի ծավալների աճին, կզսպեն, կվերահսկեն ինֆլյացիան: [3]

Առաջադրանքներ և կատարման ցուցումներ

1. Սահմանել ձեռնարկատիրության պետական կարգավորման էությունը: *Ազատ շարադրանք:*

2. Նշել ձեռնարկատիրության պետական կարգավորման երեք հիմնական ուղղությունները՝ ըստ կարգավորման օբյեկտի: *Լրացնել գծապատկերը:*



Գծապատկեր 4.6

3. Թվարկել և բնութագրել ձեռնարկատիրության պետական կարգավորման գործառույթները: *Լրացնե՛լ աղյուսակը:*

Աղյուսակ 4.7

Ձեռնարկատիրության պետական կարգավորման գործառույթը	**Բնութագիրը**
Ձեռնարկատիրության զարգացման իրավական բազայի ձևավորում	
Մրցակցության պաշտպանություն	
Հասարակական բարիքների տրամադրում	
Բացասական արտաքին էֆեկտի նվազեցում	

Եզրակացություն

Ուսումնամեթոդական ուղեցույցի վերջնական նպատակը սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու գործնական հմտություններով օժտված, բանիմաց մասնագետների պատրաստումն է:

Դասընթացի ծրագիրն ու դասավանդման մեթոդաբանությունն ուղղված են ուսանողների մոտ սերվիսի ոլորտում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման արդյունավետ ուղիների և տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքների ձևավորմանը:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիական գործունեությունից առավելագույն շահույթ ստանալու մյուս կողմում բարոյական նորմերն են, որոնց պահապանումը ոչ միայն թույլ է տալիս խուսափելու որոշակի պատասխանատվության ենթարկվելուց և հետևաբար նաև ֆինանսական վնասներ կրելուց, այլ նաև գործընկերների, սպառողների, պետության և այլ շահագրգիռ անձանց մոտ դրական իմիջի և վստահության ձևավորմամբ նպաստում է շահույթի ավելացմանը:

Դասընթացի շրջանակներում կարևորվում է ձեռնարկատիրական գործունեության ծավալումը կայուն զարգացման սկզբունքների պահպանմամբ, այն է՝ հասնել առավելագույն տնտեսական արդյունավետության՝ չվնասելով բնությունն ու հասարակության շահերը:

Ուսումնամեթոդական ուղեցույցի բովանդակության ընկալումը կնպաստի ուսանողների շրջանում նոր աշխարհայացքի և գործնական հմտությունների ձևավորմանը՝ վերոնշյալ գաղափարներին համապատասխան ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով:

Ուսումնասիրվող տեսական նյութերի ամրապնդումը գործնական պարապմունքների միջոցով նպաստում է մատուցվող նյութի առավել խորը ընկալմանը, ուսանողների մտածողությանն առավել գործնական և նպատակային ուղղություն հաղորդելուն:

Առաջարկվող մեթոդաբանությունը կնպաստի ուսանողների մոտ ինքնուրույն որոշումներ ընդունելու, արագ կողմնորոշվելու, ռացիոնալ և հստակ քայլեր իրականացնելու հմտություններ ձևավորելուն:

Գրականություն

1. Աղաջանյան Հ. Ի., Տնտեսագիտության տեսության ընդհանուր հիմունքները, Երևան, Տնտեսագետ, 2008 թ., 172 էջ։

2. Խաչատրյան Ն. Ն., Գասպարյան Կ. Է., Ծառայությունների էկոնոմիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Էքսպրես պրինտ, 2013 թ., 176 էջ։

3. Մելքումյան Մ. Ս., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Երևան, Զանգակ, 2014 թ., 512 էջ։

4. Սայադյան Հ. Ռ., Զբոսաշրջության տնտեսագիտություն, Երևան, 2014 թ., 208 էջ։

5. Վալեսյան Լ. Հ., Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ, Երևան, 2004 թ., 264 էջ։

6. Романович Ж.А., Калачев С.Л., Сервисная деятельность, Учебник, Москва, 2006 г., 284 с.:

Հավելված

Դասընթացի համար առաջարկվող գրականության ցանկը

1. «ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»՝ ընդունված 05.05.1998:
2. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 01.01.2011:
3. Աղաջանյան Հ., Տնտեսագիտության տեսության ընդհանուր հիմունքները, Երևան, Տնտեսագետ, 2008, 172 էջ:
4. Ավագյան Ա. Ռ., Սերվիսագիտության հիմունքներ, Երևան, 2017, 184 էջ:
5. Զաքարյան Ա. Ե., Սահակյան Շ.Ս. և ուրիշներ, Մարքեթինգի հիմունքներ, Երևան, Տնտեսագետ, 2013, 702 էջ:
6. Խաչատրյան Ն. Ն., Գասպարյան Կ.Է., Ծառայությունների էկոնոմիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Էքսպրես պրինտ, 2013, 176 էջ:
7. Մելքումյան Մ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Երևան, Զանգակ, 2014, 512 էջ:
8. Սայադյան Հ. Ռ., Զբոսաշրջության տնտեսագիտություն, Երևան, 2014, 208 էջ:
9. Սելվինազյան Բ., Հաջոյան Ռ., Զբոսաշրջության մարքեթինգ, Երևան, 2003, 124 էջ:
10. Սուվարյան Յու. Մ., Ծառայությունների ոլորտի արդյունավետ կառավարում, Երևան, ԱՌՏ, 2004, 288 էջ:
11. Սուվարյան Յու. Մ., Մենեջմենթ, Երևան, Տնտեսագետ, 2002, 560 էջ:
12. Վալեսյան Լ.Հ., Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ, Երևան, 2004, 264 էջ:
13. Վալեսյան Լ. Հ., Հասարակական աշխարհագրության ներծություն, Երևան, Լույս, 1999, 228 էջ:
14. Андрейченко Н.В., Ахлюстина И.С. и др., Маркетинг: вопросы и ответы, Под ред. Н.П. Кетовой, Ростов н/Д , Феникс, 2009, 478 с.

15. Асаул А.Н., Войнаренко М.П., Ерофеев П.Ю., Организация предпринимательской деятельности, Учебник, Под ред. д э.н. проф. А.Н. Асаула, СПб., Гуманистика, 2004, 448с.
16. Бабурин В.А., Гончарова Н.Л. и др., Маркетинг в сфере сервиса, Санкт-Петербург, Астерион, 2014, 439с.
17. Брунова В.И., Основы Предпринимательство, Учебное пособие, Санкт-Петербург, 2010, 106 с.
18. Буров В.Ю., Основы Предпринимательство, Чита, 2011, 441с.
19. Бусыгин А.В., Предпринимательство, М., 2003, 640с.
20. Виноградова С.А., Сорокина Н.В., Жданова Т.С., Организация и планирование деятельности предприятий сервиса, Учебное пособие, Москва, 2014, 208с.
21. Лапуста М.Г., Предпринимательство, Москва, 2008, 608с.
22. Лойко О.Т., Сервисная деятелность, Учебное пособие, Томск, 2003, 164с.
23. Наумова С.А., Экономика и предпринимательство в социально-культурном сервисе и туризме, Учебное пособие, Томск, 2003, 127с.
24. Переверзев М.П., Лунёва А.М., Основы предпринимательства, Учебник, М., ИНФРА-М., 2009, 176с.
25. Романович Ж.А., Калачев С.Л., Сервисная деятельность, Учебник, Москва, 2006, 284с.
26. Шевчук Д.А., Ценообразование, Учебное пособие, Москва, 2008, 240с.
27. Bygrave W., Zacharakis A., Entrepreneurship, Second Edition, John Wiley & Sons, Inc. 2011, 619p.
28. Hisrich R.D., Peters M.P., Shepherd D.A., Entrepreneurship, New York, NY:McGraw-Hill Education, 2017, 580p.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԻ ԴԱՎԹՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՎԻՍՈՒՄ

Ուսումնամեթոդական ուղեցույց

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 05.12.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 3.75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

